



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

-- հուլիսի 2017 թվականի №...Ա  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՍ ՔԱՄՓՆԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ  
ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ`

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ` Հանձնաժողով) 2007 թվականի մարտի 9-ի №83Ա որոշմամբ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՍ ՔԱՄՓՆԻ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ` ընկերություն) տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №0078 լիցենզիան (այսուհետ` լիցենզիա),

բ) Հանձնաժողովի 2013 թվականի մարտի 13-ի №71Ա որոշմամբ ընկերությանը տրամադրվել է ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման №1040 թույլտվությունը (այսուհետ` թույլտվություն),

գ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի նոյեմբերի 28-ի վճռով ընկերությունը սնանկ է ճանաչվել, իսկ 2016 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ սկսվել է ընկերության լուծարման գործընթացը,

դ) ընկերության սնանկության գործով կառավարիչը 2017 թվականի հուլիսի 13-ին գրությամբ դիմել է Հանձնաժողով` ընկերությանը տրամադրված լիցենզիան և թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի N°231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

- 1) 2007 թվականի մարտի 9-ի «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵԹԱՔՈՍ ՔԱՄՓՆԻ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» N°83Ա որոշումը,
- 2) 2009 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 9-ի N°83Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N°760Ա որոշումը,
- 3) 2013 թվականի մարտի 13-ի «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՍ ՔԱՄՓՆԻ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N°71Ա որոշումը,
- 4) 2017 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի մարտի 13-ի N°71Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N°62Ա որոշումը,
- 5) 2017 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 9-ի N°83Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N°63Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման վճարի մասով մինչև 2017 թվականի հուլիսի 13-ը հաշվարկված 6 624 270 (վեց միլիոն վեց հարյուր քսանչորս հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ պարտքը:

3. Ընդունելի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝

- 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով ընկերությանն իրագեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 13-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
-- հուլիսի 2017թ.